Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 24-ի N 328 -Ա որոշման

[ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ]

ՎԱՐԿ ԹԻՎ ____- ARM(SF)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ Գործառնություններ)

(Քաղաքային կայուն զարգացման ներդրումային Ծրագիր, Ծրագիր 1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ _____

LAS:ARM____

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ Գործառնություններ)

Ամսաթիվ _____-ին Ասիական Զարգացման Բանկի («ԱԶԲ») և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Վարկառու») միջև կնքած ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

(Ա) Վարկառուի և ԱԶԲ միջև_____ -ին կնքած Ֆինանսավորման Շրջանակային Համաձայնագրով ("ՖՇՀ") ԱԶԲ-ը համաձայնվել է Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի («Ներդրումային Ծրագիր») ծրագրերի և ենթածրագրերի կարիքների համար բազմատրանշ ֆինանսավորման գործիք («Գործիք») տրամադրել Վարկառուին,

(Բ) _____-ին ներկայացված պարբերական ֆինանսավորման հայցով՝ Վարկառուն դիմել է ԱԶԲ, վերջինիս Հատուկ Ֆոնդերի միջոցներից սույն Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 1-ում նկարագրված Ծրագրի (Ծրագիր) կարիքների համար վարկ ստանալու խնդրանքով,

(Գ) Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքի կողմից («Երևան»),

և

(Դ) ԱԶԲ-ը համաձայնվել է իր Հատուկ Ֆոնդերի միջոցների վարկ տրամադրել Վարկառուին՝ սույն պայմանագրով, ինչպես նաև և ԱԶԲ ու Երևանի միջև [նույն ամսաթվով] կնքվող Ծրագրի Համաձայնագրով սահմանված պայմաններով

Այսպիսով, կողմերը եկել են համաձայնության հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկի Տրամադրման Պայմանները, Սահմանումներ

1.01. 2006թ. հունվարի 1-ի ԱԶԲ Հատուկ Գործառնությունների Վարկերի Տրամադրման Պայմանների («Վարկի Տրամադրման Պայմանները») բոլոր դրույթները իրենց ողջ ուժով կիրառելի են դառնում այս Վարկային Համաձայնագրի համար՝ որպես հենց նրանում լիովին սահմանված լինեն։

1.02. Այս Վարկային Համաձայնագրի ցանկացած մասում օգտագործվելու դեպքում, Վարկի Տրամադրման Պայմաններում սահմանված մի շարք եզրեր, այստեղ նույնպես ունեն համապատասխան նշանակությունը, եթե նրանք չեն փոփոխվել կամ եթե այլ բան չի պահանջում բովանդակությունը։ Այս Վարկային Համաձայնագրում օգտագործվող լրացուցիչ եզրերն ունեն հետևյալ իմաստը.

"Խորհրդատվական Ուղեցույցեր" նշանակում է Ասիական Զարգացման Բանկի և վերջինիս Վարկառուների կողմից Խորհրդատուների Կիրառման Մասին Ուղեցույցը (2010թ., որը պարբերաբար վերանայվում է),

"Խորհրդատվական Ծառայություններ" նշանակում է Վարկի միջոցներից ֆինանսավորվող ծառայություններ, այնպես, ինչպես նկարագրված է այս Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 1-ի 2(բ) և 2(գ) կետերում, սակայն բացառելով Ապրանքների և Աշխատանքների մասով տրամադրված ծառայությունները,

"ՇՄԱԳՇ" նշանակում է ԲՖԳ-ի (Բազմատրանշ ֆինանսավորման գործիքի) Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման և Դիտարկման Շրջանակ, այնպես ինչպես համաձայնեցված է Վարկառուի ու ԱԶԲ միջև, և որը պարբերաբար վերանայվում է,

“Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման և Դիտարկման Շրջանակ” կամ “ՇՄԱԳՇ” նշանակում է Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնեցված Ներդրումային Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և դիտարկման շրջանակը, ներառյալ դրա ցանկացած փոփոխությունները, որոնք հղումով ներառնված են ՖՇՀ մեջ,

“Շրջակա միջավայրի կառավարման ծրագիր” կամ “ՇՄԿԾ” նշանակում է ենթածրագրի բնապահպանական կառավարման յուրաքանչյուր ծրագիր, ներառյալ դրա փոփոխությունները, որոնք ներառնված կլինեն Նախնական Բնապահպանական Հետազոտության մեջ,

“Բնապահպանական երաշխիքներ” նշանակում է Երաշխիքների Քաղաքականության Բաժին V-ում, Հավելված 1-ում և Հավելված 4-ում (ըստ անհրաժեշտության) սահմանված սկզբունքներն ու պահանջները,

"ԳԿՁ" նշանակում է ԲՖԳ համար նախատեսված կառավարման ձեռնարկ, այնպես, ինչպես համաձայնեցված է Վարկառուի ու ԱԶԲ միջև, և որը Ծրագրին կիրառելու նպատակով՝ պարբերաբար վերանայվում է՝ Վարկառուի ու ԱԶԲ համապատասխան վարչարարական ընթացակարգերի համաձայն,

"Ապրանքներ" նշանակում է Վարկի միջոցներից ֆինանսավորվող սարքավորումներ և նյութեր, ներառյալ դրանց հետ կապված ծառայություններ, ինչպիսիք են փոխադրումը, ապահովագրումը, տեղադրումը, շահագործման սկիզբը, վերապատրաստումը և նախնական պահպանումը, սակայն բացառելով Խորհրդատվական Ծառայությունները,

“Նախնական Բնապահպանական Հետազոտություն” կամ “ՆԲՀ” նշանակում է Ենթածրագրի յուրաքանչյուր նախնական հետազոտություն, ներառյալ դրա փոփոխությունները, որը ՇՄԱԳՇ սահմանված պահանջներին համապատասխան պատրաստվել և ներկայացվել է Վարկառուին ու հաստատվել ԱԶԲ կողմից,

“Հարկադրված վերաբնակեցման երաշխիքներ” Երաշխիքների Քաղաքականության Բաժին V-ում, Հավելված 2-ում և Հավելված 4-ում սահմանված սկզբունքներն ու պահանջները (ըստ անհրաժեշտության),

"ՀՕՎՇ" նշանակում է ԲՖԳ Հողերի Օտարման և Վերաբնակեցման Շրջանակը, այնպես ինչպես որ համաձայնեցված է Վարկառուի ու ԱԶԲ միջև, և որը պարբերաբար վերանայվում է,

"Վարկի Տրման (Վճարման) Ձեռնարկ" նշանակում է ԱԶԲ Վարկի Տրման (Վճարման) Ձեռնարկ (2007թ., որը պարբերաբար վերանայվում է),

"ՊՖՀ" նշանակում է ԲՖԳ շրջանակում, յուրաքանչյուր տրանշի նպատակների համար, Վարկառուի կողմից ներկայացվող կամ ներկայացման ենթակա պարբերական ֆինանսավորման հայտ, իսկ այս Վարկային Համաձայնագրի նպատակների համար նշանակում է [ամսաթիվ_____-ին] ներկայացված պարբերական ֆինանսավորման հայտը,

“Գնումների Ուղեցույց” նշանակում է ԱԶԲ Գնումների Ուղեցույցը (2010թ., որը պարբերաբար վերանայվում է),

“Գնումների ծրագիր” նշանակում է 2011թ. մարտի 3-ով թվագրված ծրագրի գնումների պլանը, որը Գնումների Ուղեցույցին և Խորհրդատվական Ուղեցույցին և ԱԶԲ հետ համաձայնեցված այլ միջոցառումներին համապատասխան, պարբերաբար վերանայվում է

"Ծրագրի Գործադիր Մարմին" Վարկի Տրման Պայմանների նպատակների համար և նրա իմաստին համահունչ՝ նշանակում է Վարկառուի Էկոնոմիկայի նախարարությունը կամ ԱԶԲ համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի ընթացքի համար,

“Վերաբնակեցման Շրջանակ” կամ “ՎՇ” նշանակում է Ներդրումային Ծրագրի վերաբնակեցման շրջանակը, ներառյալ Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնեցված ու ՖՇՀ-ում հղված փոփոխությունները,

“Վերաբնակեցման Ծրագիր” կամ ՎԾ նշանակում է Ենթածրագրի յուրաքանչյուր վերաբնակեցման ծրագիր, ներառյալ ՎԾ-ի պահանջների համապատասխան Վարկառուի կողմից պատրաստված, ներկայացված և ԱԶԲ կողմից հաստատված փոփոխությունները,

“Երաշխիքների Մոնիտորինգի Հաշվետվություն” նշանակում է Վարկառուի կողմից պատրաստված և ԱԶԲ ներկայացրած յուրաքանչյուր հաշվետվություն, որը նկարագրում է ՇՀՄԿԾ, ՎԾ և IPP իրականացման առաջընթացը և համապատաս-խանությունը դրանց, ներառյալ ուղղող և կանխարգելող գործողությունները,

“Երաշխիքների Քաղաքականության Կարգ” կամ “ԵՔԿ” նշանակում է ԱԶԲ համապատասխան փաստաթուղթը (2009թ.),

"Ենթածրագիր" նշանակում է այս Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 1-ի 2(ա) կե-տով նախատեսված կառուցապատման հատուկ ծրագիր կամ ենթածրագիր, և

"Աշխատանքներ" նշանակում է Վարկի միջոցներից ֆինանսավորվող կառուցապատ-ման կամ շինարարական աշխատանքներ, բացառությամբ Խորհրդատվական Ծառա-յությունները, սակայն ներառյալ այնպիսի ծառայությունների ինչպիսիք են հորատումը կամ քարտեզագրումը, ինչպես նաև ծրագրի հետ կապված ծառայություններ, որոնք տրամադրվում են՝ որպես մեկ առանձին պարտավորության մաս կամ որպես «ընդունման պատրաստե պայմանագիր։

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

2.01. ԱԶԲ-ը համաձայնում է իր Հատուկ Ֆոնդերի միջոցներից, տարբեր տարադրամներին համարժեք, Վարկառուին տրամադրել SDR 30, 989, 000 (երեսուն միլիոն ինը հարյուր ութսուն ինը հազար Փոխառության Հատուկ Իրավունքի) վարկ։

2.02. (ա) Վարկառուն պետք է արտոնյալ ժամկետի ընթացքում տարեկան 1%-ի, իսկ դրա ավարտից հետո՝ տարեկան 1.5% չափով տոկոսավճար վճարի ԱԶԲ-ին՝ Վարկային Հաշվից հանված Վարկի գումարի և հետագա մնացորդի համար։

(բ) Այս բաժնի ա կետում օգտագործված «արտոնյալ ժամկետ» եզրը նշանակում է առաջին Հիմնական Հետվճարման Ժամկետին նախորդող ժամանակահատվածը՝ այս Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 2-ում սահմանված վճարումների ժամանակացույցին համապատասխան։

2.03. Վարկի տոկոսավճարը և այլ վճարների մարումը պետք է կատարվի կիսամյակային հիմունքներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին։

2.04. Վարկառուն պետք է հետ վճարի Վարկային Հաշվից հանված Վարկի մայր գումարը և տոկոսները՝ այս Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 2-ում սահմանված վճարումների ժամանակացույցին համապատասխան։

2.05. Վարկի Տրման Պայմանների բաժին 4.03(ա) և 4.04-ի նպատակներից ելնելով՝ Վարկի մայր գումարի վերադարձի և տոկոսավճարի վճարման տարադրամը պետք է լինի դոլարը։

ՀՈԴՎԱԾ III

Վարկի գումարների օգտագործումը

3.01. Վարկառուն, ԱԶԲ բավարարող պայմաններով, Երևանին մատչելի կդարձնի Վարկի գումարները և կապահովի, որ Երևանն օգտագործի այս գումարները Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար՝ սույն Վարկային Համաձայնագրի և Ծրագրի Համաձայնագրի դրույթներին համապատասխան։

3.02. Վարկի գումարները կտեղաբաշխվեն և կհանվեն այս Վարկային Համաձայնագրի համապատասխան Աղյուսակ 3-ի դրույթներին, որը, Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնության միջոցով, կարող է պարբերաբար վերանայվել։

3.03. Եթե այլ բան համաձայնեցված չէ ԱԶԲ հետ, Վարկառուն պետք է գնի կամ ապահովի որպեսզի ծախսային միավորները գնվեն այս Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 4-ի կիրառելի դրույթներին համապատասխան։

3.04 Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների մասով Վարկային Հաշվից գումարի ստացումը պետք է կատարվի միայն այն ծախսերի հաշվով, որոնք վերաբերվում են.

(ա) այն ապրանքներին որոնք արտադրվում կամ մատակարարվում են և այն ծառայությունների, որոնք տրվում են ԱԶԲ կողմից՝ պարբերաբար որպես գնումների ընդունելի աղբյուր սահմանվող ԱԶԲ անդամ-պետություններից, և

(բ) այն Ապրանքներին, Աշխատանքներին և Խորհրդատվական Ծառայություններին, որոնք համապատասխանում են ընդունելի լինելու այլ նման չափանիշներին, որոնք պարբերաբար սահմանվում են ԱԶԲ կողմից։

3.05. Վարկի Տրման Պայմանների Բաժին 8.02-ի նպատակների համար, Վարկի Փակման ամսաթիվն է 2016թ. հունիսի 30-ը կամ այլ ժամկետ, որը կարող է հետագայում համաձայնեցվել Վարկառուի և ԱԶԲ միջև։

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ Դրույթներ

4.01. Ծրագրի իրականացման և Ծրագրի գործիքների գործունեության ընթացքում Վարկառուն պետք է կատարի կամ ապահովի, որպեսզի կատարվեն այս Վարկային Համաձայնագրի Հավելված 5-ում սահմանված պարտավորությունները։

4.02. Վարկառուն պետք է ԱԶԲ ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռնի ստուգելու Ծրագիրը, Ապրանքներն ու Աշխատանքները, ինչպես նաև այլ համապատասխան գրառումներն ու փաստաթղթերը։

4.03. (ա) Վարկառուն պետք է ապահովի, որ Երևանը (i) ունենա կամ ապահովի Ծրագրի առանձին հաշիվների առկայությունը; (ii) շարունակաբար կիրառվող համապատասխան աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձն ու տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ համար, ամենամյա աուդիտի ենթարկի այս հաշիվները; և (iii) մատչելի

դառնալուն պես, սակայն, ամեն դեպքում, ոչ ուշ քան համապատասխան հաշվետու տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում, ԱԶԲ տրամադրի աուդիտի ենթարկված հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների հաստատված պատճենները, ինչպես նաև դրանց վերաբերվող աուդիտորի հաշվետվությունը (ներառյալ Վարկի միջոցների կիրառման և այս Վարկային Համաձայնագրի ֆինանսական դրույթների համապատասխանության վերաբերյալ աուդիտորի կարծիքը). բոլորը՝ անգլերեն լեզվով; և (iv) ԱԶԲ տրամադրի նաև այս հաշիվներին և ֆինանսական հաշվետվությունների ու դրանց աուդիտի վերաբերյալ այլ տեղեկատվություն, որն ԱԶԲ կարող է ժամանակ առ ժամանակ հիմնավորված կերպով խնդրել։

(բ) Վարկառուն, ԱԶԲ խնդրանքով, պետք է վերջինիս հնարավորություն ընձեռի, այս բաժնի (ա) կետի պայմաններին համաձայն, Երևանի կողմից նշանակված աուդիտորների հետ, պարբերաբար, քննարկել Երևանի՝ Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն ու նրա՝ Ծրագրի հետ կապված ֆինանսական հարաբերությունները և լիազորի ու պահանջի այս աուդիտորների ցանկացած ներկայացուցչի մասնակցելու ԱԶԲ կողմից նախաձեռնված նման քննարկումներին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ այս քննարկումներն անց են կացվելու միայն Երևանի լիազորված պատասխանատուների ներկայությամբ, եթե այլ բան համաձայնեցված չէ Երևանի հետ։

4.04. Վարկառուն կձեռնարկի իրենից պահանջվող բոլոր գործողությունները, որպեսզի հնարավորություն ընձեռնի Երևանին կատարելու Ծրագրի Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները և չի ձեռնարկի կամ թույլ չի տա որևիցե գործողություն, որը կմիջամտի նման պարտավորությունների կատարմանը։

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

5.01. Վարկի Տրման Պայմանների բաժին 9.04-ի նպատակներից ելնելով՝ Վարկային Համաձայնագրի ստորագրումից հետո 60-օրյա ժամկետ է սահմանված Վարկային Համաձայնագրերի ուժի մեջ մտնելու համար։

ՀՈԴՎԱԾ VI

Լիազորությունների փոխանցումը

6.01. Վարկառուն Երևանին իր գործակալ է նշանակում՝ այս Վարկային Համաձայնագրի բաժին 3.03-ով և Վարկի Տրման Պայմանների 5.01, 5.02 և 5.03

բաժիններով պահանջվող կամ թույլատրվող գործողությունների իրականացման և պայմանագիր կնքելու նպատակով։

6.02. Սույն Վարկային համաձայնագրի 6.01 բաժնով տրված լիազորություններից ելնելով՝ Երևանի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն կամ համաձայնագիր լիարժեքորեն իրավապարտադիր է Վարկառուի համար և կունենա նույն ուժն ու ազդեցությունը, ինչը կունենար, եթե այն ստանձնված լիներ Վարկառուի կողմից։

6.03. Սույն Վարկային համաձայնագրի 6.01 բաժնով Երևանին տրված լիազորությունները կարող են հետ կանչվել կամ փոփոխվել՝ Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնությամբ։

ՀՈԴՎԱԾ VII
Այլ Դրույթներ

7.01. Վարկի Տրման Պայմանների 11.02 բաժնի նպատակների համար Վարկառուի ներկայացուցիչ է նշանակվում Վարկառուի Ֆինանսների Նախարարը։

7.02. Վարկի Տրման Պայմանների 11.01 բաժնի նպատակների համար սահմանվում են հետևյալ հասցեները.

Վարկառու

Ֆինանսների Նախարարություն
Մելիք-Ադամյան 1
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ֆաքսի համար։

(+37410) 528262.

ԱԶԲ

Asian Development Bank
P.O. Box 789
0980 Manila, Philippines

Ֆաքսի համար։

(632) 636-2444
(632) 636-2301.

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԱՎԱՍՏՄԱՄԲ՝ կողմերը՝ գործելով իրենց՝ պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով, վերը նշյալ ամսաթվով, ստորագրում են այս Ծրագրի Համաձայնագիրը և ապահովում են, որպեսզի այն առաքվի ԱԶԲ գլխամաս։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ կողմից ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ 1 Ծրագրի նկարագրություն

1. Ծրագիրը կբարելավի քաղաքային համայնքների համար տնտեսական հնարավորությունների և հանրային ու սոցիալական ծառայությունների մատչելիությունը, կմեծացնի տնտեսական աճի ներուժը և կընդլայնի մասնավոր հատվածի ներգրավվածությունը: Ծրագիրը կբարելավի Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները:

2. Ծրագիրը բաղկացած է լինելու հետևյալ հիմնական տարրերից.

<u>ա/ Քաղաքային Տրանսպորտի Ենթակառուցվածքի Բարելավում</u>, ներառյալ հետևյալ Ենթածրագրերը.

ա/ Արգավանդի խճուղի – Շիրակի փողոց ճանապարհ (Արևմուտք);
բ/ Արտաշատի խճուղի – Շիրակի փողոց ճանապարհ և Թամանցիների փողոցի հատվածը (Հարավ-Արևմուտք);

<u>բ/ Բաղադրիչ Բ: Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</u>

(i) Երևանի և քաղաքային տրանսպորտի ծառայությունների տրամադրողների ինստիտուցիոնալ և մոնիտորինգի կառավարման կարողությունների ամրապնդում;
(ii) Բազմամոդալ կառավարման և համակարգման հանձնաժողովի ստեղծում
(iii) Բազամամոդալ տրանսպորտային համակարգ (ներառյալ սակագները, տոմսերը, տեղեկատվությունը, նշանները, քաղաքային տրանսպորտի կայքը, մատչելիությունը, երթևեկության մոդելը)՝ իրականացման գործողությունների ծրագրի հետ միասին
(iv) Մոնիտորինգի բաժնի ստեղծում ծրագրի ազդեցությունները, ներառյալ գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատման համար:

<u>գ/ Բաժին Գ: Ծրագրի Կառավարում և կարողությունների զարգացում</u>

(i) Խորհրդատվական ծառայությունների վարձում իրականացվող ծրագրի կառավարման, ինժեներական և վերահսկողության ծառայությունների համար, Տրանշ 2-ի ծրագրերի նախապատրաստում և խորհրդատվական ծառայությունների աուդիտի, երաշխիքների մոնիտորինգի և ծրագրի գնահատման համար;
(ii) Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումների կարողությունների հզորացում Երևանի քաղաքապետարանի և քաղաքային տրանսպորտի այլ օպերատորների համար կազմակերպվող Վերապատրաստման ծրագրերի (տրանսպորտի ծրագրում և մոդելավորում,

գնումներ, ֆինանսական կառավարում և երաշխիքներ) միջոցով՝ Ներդրումային ծրագրի իրականացմանը հետևելու նպատակով, և հանրային իրազեկման արշավների իրականացում, և
(iii) Սարքավորումներ, ծրագրեր, երթևեկության մոդել, հողումային փաստաթղթեր և իրա իրազեկում

3. Ծրագիրն ակնկալվում է ավարտել 2015թ. դեկտեմբերի 31-ին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Վճարումների ժամանակացույց

(Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, ծրագիր 1)

Փուլ	Վճարման օր	Մայր Գումարրի մարում (SDR –ով արտահայտված)*
1	15 հուլիս 2019	645,604.00
2	15 հունվար 2020	645,604.00
3	15 հուլիս 2020	645,604.00
4	15 հունվար 2021	645,604.00
5	15 հուլիս 2021	645,604.00
6	15 հունվար 2022	645,604.00
7	15 հուլիս 2022	645,604.00
8	15 հունվար 2023	645,604.00
9	15 հուլիս 2023	645,604.00
10	15 հունվար 2024	645,604.00
11	15 հուլիս 2024	645,604.00
12	15 հունվար 2025	645,604.00
13	15 հուլիս 2025	645,604.00
14	15 հունվար 2026	645,604.00
15	15 հուլիս 2026	645,604.00
16	15 հունվար 2027	645,604.00
17	15 հուլիս 2027	645,604.00
18	15 հունվար 2028	645,604.00
19	15 հուլիս 2028	645,604.00
20	15 հունվար 2029	645,604.00
21	15 հուլիս 2029	645,604.00
22	15 հունվար 2030	645,604.00
23	15 հուլիս 2030	645,604.00
24	15 հունվար 2031	645,604.00
25	15 հուլիս 2031	645,604.00
26	15 հունվար 2032	645,604.00
27	15 հուլիս 2032	645,604.00
28	15 հունվար 2033	645,604.00
29	15 հուլիս 2033	645,604.00
30	15 հունվար 2034	645,604.00
31	15 հուլիս 2034	645,604.00
32	15 հունվար 2035	645,604.00
33	15 հուլիս 2035	645,604.00
34	15 հունվար 2036	645,604.00
35	15 հուլիս 2036	645,604.00
36	15 հունվար 2037	645,604.00
37	15 հուլիս 2037	645,604.00
38	15 հունվար 2038	645,604.00
39	15 հուլիս 2038	645,604.00

40	15 հունվար 2039	645,604.00
41	15 հուլիս 2039	645,604.00
42	15 հունվար 2040	645,604.00
43	15 հուլիս 2040	645,604.00
44	15 հունվար 2041	645,604.00
45	15 հուլիս 2041	645,604.00
46	15 հունվար 2042	645,604.00
47	15 հուլիս 2042	645,604.00
48	15 հունվար 2043	645,612.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	**30.989.000.00**

Յուրաքանչյուր վճարման ընթացքը Վարկի Տրման Պայմանների սահմանված դրույթների առարկա է հանդիսանում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկի Գումարների Բաշխումը և Հանումը

Ընդհանուր

1. Այս Բաժնին կից ներկայացվող Աղյուսակը սահմանում է ծախսային միավորների այն Տողերը, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից և գումարի բաշխումները նման յուրաքանչյուր Տողին («Աղյուսակ»): (Այս Բաժնում "Տող" եզրը նշանակում է Աղյուսակի Տողը կամ Տողեր):

ԱԶԲ ֆինանսավորման Տոկոսը

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ այլ բան կարող է որոշել, յուրաքանչյուր ծախսային միավոր պետք է ֆինանսավորվի Վարկի միջոցներից՝ Աղյուսակում սահմանված տոկոսով:

Տոկոսադրույք

3. Տող 5-ում բաշխված գումարը նախատեսված է Ծրագրի իրականացման ընթացքում Վարկի տոկոսադրույքի ֆինանսավորման համար:

Վերաբնակեցման ծախսեր

4. Տող 4-ում ամրագրված գումարները նախատեսված են Ծրագրի հետ կապված վերաբնակեցման ծախսերի ֆինանսավորման համար և պետք է բացառեն Ծրագրին առնչվող հողերի օտարման հետ կապված ցանկացած ծախս, ինչպես նաև Վարկառուի տարածքում գործող ցանկացած հարկ կամ պարտավորություն:

Վերաբաշխում

5. Աղյուսակում սահմանված Վարկի գումարների բաշխումից և հանման տոկոսներից անկախ՝

(ա) եթե պարզվի, որ ցանկացած կարգին հատկացված գումարը բավարար չէ տվյալ Տողի համար համաձայնեցրած բոլոր ծախսերը ֆինանսավորելու համար, ԱԶԲ-ը կարող է, ծանուցելով Վարկառուին, (i) այլ Տողին բաշխված գումարից, որը ԱԶԲ կարծիքով անհրաժեշտ չէ այլ ծախսեր կատարելու համար, գնահատված պակասորդի չափով վերաբաշխում կատարել տվյալ Տողին, և (ii) եթե նման վերաբաշխումը չի կարող լիովին ծածկել գնահատված պակասորդը, կրճատել նման ծախսերի համար կիրառելի մասհանման տոկոսը, որպեսզի այդ Տողով կատարվող հետագա հանումները շարունակվեն այնքան ժամանակ մինչև դրանով նախատեսված բոլոր ծախսերը կատարված լինեն; և

(բ) եթե պարզվի, որ Տողերից ցանկացածին բաշխված գումարները գերազանցում են տվյալ Կարգի համար բոլոր համաձայնեցված ծախսերը, ապա ԱԶԲ-ը կարող է, ծանուցելով Վարկառուին, այլ Կարգ վերաբաշխել նման ավելացած գումարները։

Վճարման Ընթացակարգերը

6. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ կարող է այլ բան որոշել, Վարկի գումարները պետք է վճարվեն ըստ Վարկի Տրման (Վճարման) Ձեռնարկի կանոնների։

Հատուկ Հաշիվ և Ծախսերի Հաշվետվություն

7. (ա) Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ կարող է այլ բան որոշել, Ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, Վարկառուն իր Գանձապետարանում պետք է հատուկ հաշիվ բացի։ Հաշվետու հաշիվը պետք է ստեղծվի, կառավարվի, համալրվի և փակվի Վարկի Տրման (Վճարման) Ձեռնարկին և Վարկառուի ու ԱԶԲ միջև համաձայնեցված մանրամասն միջոցառումներին համապատասխան։ Հաշվետու հաշվի տարադրամը կհանդիսանա Դոլարը։ Հաշվետու հաշվի առավելագույն շեմը չպետք է գերազանցի (i) Ծրագրի իրականացման առաջին 6 ամիսների ընթացքում հատուկ հաշվից ֆինանսավորման ենթակա գնահատված ծախսերի, կամ (ii) Վարկի 10% -ին համարժեք գումարի նվազագույնը։

(բ) Ծախսերի հաշվետվությունը կարող է, Վարկի Տրման (Վճարման) Ձեռնարկին և Վարկառուի ու ԱԶԲ միջև համաձայնեցված մանրամասն միջոցառումներին համապատասխան, օգտագործվել իրավաչափ ծախսերի փոխհատուցման և հատուկ հաշվին վճարված կանխավճարների ծածկման համար։ Փոխհատուցման ենթակա ցանկացած առանձին (անհատական) վճարում չպետք է գերազանցի 100,000 ԱՄՆ դոլարը։

Ռետրոակտիվ ֆինանսավորում

8. Վարկի Հաշվից կարող են գումարներ հանվել՝ Ծրագրով, մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, սակայն ոչ վաղ քան այս Վարկային Համաձայնագրի ամկետից 12 ամիս առաջ, Խորհրդատվական Ծառայությունների, Ապրանքների և Աշխատանքների մասով կատարված վճարումների փոխհատուցման համար, որոնք սակայն չպետք է գերազանցեն Վարկի գումարի առավելագույնը 20% -ի համարժեքը։

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄ (Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Ծրագիր 1)			
ՏՈՂ			ԱԶԲ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
Թիվ	**Միավոր**	**ԱԶԲ ֆինանսավորման համար տրամադրված ընդհանուր գումարը (SDR '000)**	**Տոկոս և Վարկային հաշվից մասհանման հիմք**
1	Աշխատանքներ	20,037	100 տոկոս ընդհանուր ծախսերից*
2	Ապրանքներ	274	100 տոկոս ընդհանուր ծախսերից*
3	Խորհրդատվական ծառայություններ և ծավալվող վարչարարություն	4,122	100 տոկոս ընդհանուր ծախսերից*
4	Վերաբնակեցում	3,058	100 տոկոս ընդհանուր ծախսերից **
5	Տոկոս	650	100 տոկոս վճարման ենթակա գումարների մասով
6	Չբաշխված	2 848	
	ԸՆԴՀԱՄԵՆԸ	30,989	

* Բացառությամբ Վարկառուի տարածքում կիրառվող հարկերի և տուրքերի
**Բացառությամբ հողերի օտարման հետ կապված ծախսեր, Վարկառուի տարածքում կիրառվող հարկերն ու տուրքերը

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների Գնում

Ընդհանուր

1. Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների գնումը պետք է Գնումների Ուղեցույցի առարկա հանդիսանա և կառավարվի Խորհրդատվական Ուղեցույցով:

2. Սույն Վարկային Համաձայնագրում օգտագործվող և այլ կերպ չսահմանված եզրերն ունեն այն իմաստը, որը տրված է Գնումների Ուղեցույցում և/կամ Խորհրդատվական Ուղեցույցում:

Ապրանքների և Աշխատանքների Գնումներ

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ը այլ կերպ որոշի, Ապրանքները և Աշխատանքներ կարող են գնվել միայն ստորև սահմանված գնումների մեթոդի հիման վրա.

(a) Միջազգային Մրցույթ;
(b) Տեղական Մրցույթ; և
(c) Ձեռքբերում (Շոփինգ):

4. Ի թիվս այլոց, գնումների մեթոդները Գնումների Ծրագրում սահմանված մանրամասն միջոցառումների և շեմային արժեքների առարկա են հանդիսանում: Գնումների մեթոդները կամ շեմային արժեքները կարող են փոփոխվել միայն ԱԶԲ հետ նախապես համաձայնեցնելու դեպքում, իսկ փոփոխությունները պետք է սահմանվեն Գնումների Ծրագրի նորացված տարբերակներում:

Պայմանագրերի ստորագրման պայմանները

5. Վարկառուն չպետք է Աշխատանքների հետ կապված որևիցե պայմանագիր ստորագրի բնապահպանական ազդեցություն ենթադրող որևիցե ենթածրագրի համար մինչև Ծրագրի Գործադիր մարմինը

(a) Բնապահպանության նախարարությունից ստանում է ՆԲՀ վերջնական հավանությունը; և

(b) Աշխատանքների պայմանագրում չի ներառում ԲԿԾ համապատասխան դրույթները:

6. Վարկառուն չպետք է հարկադիր վերաբնակեցում նախատեսող Ենթածրագրի Աշխատանքների պայմանագիր ստորագրի, մինչև Վարկառուն նման Ենթածրագրի մանրամասն նկարագրության հիման վրա պատրաստված վերջնական ՎԾ չներկայացնի ԱԶԲ և չստանա վերջինիս հավանությունը:

Խորհրդատվական Ծառայություններ

7. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ը այլ կերպ որոշի և բացառությամբ ստորև բերված սահմանումների, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Երևանը, Խորհրդատվական Ծառայություններ ընտրելիս և ներգրավելիս, կատարի որակի և գնի վրա հիմնված ընտրություն:

8. Հատուկ խորհրդատվական ծառայություններ ընտրելիս և ներգրավելիս՝ Երևանը, Գնումների Ծրագրում ձևակերպված ընթացակարգերի համաձայն, ի թիվս այլոց, կկիրառի հետևյալ մեթոդները.

(a) Ծրագրի մշտական կառավարման ու մոնիտորինգի համար Խորհրդատուների Որակավորման Ընտրության մեթոդը, և
(b) Նվազագույն Արժեքի Ընտրության մեթոդը՝ աուդիտի համար.

9. Վարկառուն կապահովի, որպեսզի Երևանը կարողությունների զարգացման խորհրդատվության համար խորհրդատուների ընտրությունը կատարի ԱԶԲ համար ընդունելի՝ անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերի համաձայն:

Արդյունաբերական և Մտավոր Սեփականության Իրավունք

10. (ա) Վարկառուն կապահովի, որպեսզի բոլոր գնվող Ապրանքներն ու Աշխատանքները (ներառյալ, առանց սահմանափակումների, ողջ համակարգչային տեխնիկան, ծրագրերը և համակարգերը՝ անկախ այն հանգամանքից առանձին են ձեռք բերված, թե ներգրավված են գնվող այլ ապրանքների և ծառայությունների մեջ) չոտնահարեն և չխախտեն որևիցե արտադրական կամ մտավոր սեփականության իրավունք կամ էլ երրորդ կողմի պահանջի առարկա հանդիսանան:

(բ) Վարկառուն ապահովում է, որպեսզի Ապրանքներ և Աշխատանքների գնման համար կնքած պայմանագրերը, այս բաժնի ա կետում նկարագրված դեպքերի իմաստով, կապալառուի կամ մատակարարի կողմից համապատասխան ներկայացուցչականություն, երաշխիքներ և, անհրաժեշտության դեպքում, նաև փոխհատուցումներ պարունակեն:

11. Վարկառուն ապահովում է, որպեսզի ԱԶԲ ֆինանսավորմամբ խորհրդատուների հետ պայմանագրերը խորհրդատուների կողմից համապատասխան ներկայացուցչականություն, երաշխիքներ և, անհրաժեշտության դեպքում, նաև փոխհատուցումներ պարունակեն, որպեսզի տրամադրվող խորհրդատվական ծառայությունները չոտնահարեն և չխախտեն որևիցե արտադրական կամ մտավոր սեփականության իրավունք կամ էլ երրորդ կողմի պահանջի առարկա հանդիսանան:

Գնումների Որոշումների Դիտարկում ԱԶԲ կողմից

12. Միջազգային Մրցույթի ընթացակարգերով գնված կամ Խորհրդատվական Ծառայությունների պայմանագրերը ԱԶԲ՝ նախնական դիտարկման առարկա են հանդիսանում, եթե

այլ բան համաձայնեցրած չէ Վարկառուի ու ԱԶԲ միջև և սահմանված չէ Գնումների Ծրագրով։

13. Աշխատանքների կամ Ապրանքների պայմանագրերում նշված ավարտի ժամկետներն երկարաձգելիս կամ նման պայմանագրերի պայմաններում փոփոխություններ կատարելիս, ներառյալ հերթականության կամ հերթականությունների փոփոխությունը, Վարկառուն, առաջարկվող փոփոխությունների կամ երկարաձգումների մասով պետք է ստանա ԱԶԲ հավանությունը։ Եթե ԱԶԲ որոշի, որ առաջարկությունները չեն համապատասխանում Վարկային համաձայնագրին և/կամ Գնումների ծրագրին, ապա պատշաճ կերպով այդ մասին կիրազեկի Վարկառուին՝ նշելով նման որոշման պատճառները։ Պայմանագրում կատարված բոլոր փոփոխությունների պատճեն պետք է տրամադրվի ԱԶԲ-ին՝ սեփական գրառումների համար։

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Ծրագրի Կատարումը և Ծրագրի Տարրերի Աշխատանքը; Ֆինանսական Խնդիրներ

Իրականացման Միջոցառումներ

1. Վարկառուն Երևանին կնշանակի Ծրագիրն Իրականացնող Մարմին, որը պատասխանատու կլինի ողջ Ծրագրի Իրականացման և ԱԶԲ ու պետական մարմինների հետ կապը պահպանելու համար: Վարկառուն և Երևանը կապահովեն, որպեսզի Ծրագիրն իրականացվի ԾԿԳ-ում սահմանված մանրամասն միջոցառումներին համաձայն: ԾԿԳ ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ կմտնի միայն նման փոփոխության Վարկառուի և ԱԶԲ կողմից հաստատվելու դեպքում: ԾԿԳ և այս Վարկային Համաձայնագրի և/կամ Ծրագրի Համաձայնագրի միջև տարաձայնությունների առկայության դեպքում, գերակայությունը կտրվի վերջիններիս դրույթներին:

Շրջակա Միջավայր

2. Վարկառուն պետք է ապահովի, որ յուրաքանչյուր Ենթածրագրի նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, գործողությունը և ավարտը համապատասխանի ա/ Վարկառուի՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը և անվտանգությանը վերաբերվող օրենսդրությանը, բ/ Բնապահպանական երաշխիքներին, գ/ ՇՄԱԳՇ-ին և դ/ համապատասխան ՆԲԳ-ում և ԲԿԾ նախատեսված միջոցառումներին և պահանջներին, ինպես նաև Երաշխիքների Մոնիտորինգի Հաշվետվությամբ նախատեսված ուղղող կամ կանխարգելող գործողություններին:

Հողերի օտարում և Հարկադրված Վերաբնակեցում

3. Վարկառուն պետք է ապահովի, որ յուրաքանչյուր Ենթածրագրի համար պահանջվող հողերն ու օտարման իրավունքն Աշխատանքների կապալառուին տրամադրվեն համապատասխան Աշխատանքների պայմանագրում համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան և հողերի օտարման ու վերաբնակեցման գործողություններն իրականացվեն ա/ Վարկառուի հողերի օտարման և հարկադիր վերաբնակեցման օրենսդրության, բ/ Հարկադիր Վերաբնակեցման Երաշխիքների, գ/ՎՇ և դ/ համապատասխան ՎԾ-ով նախատեսված միջոցառումներին և պահանջներին, ինչպես նաև Երաշխիքների Մոնիտորինգի Հաշվետվությամբ նախատեսված ուղղող կամ կանխարգելող գործողություններին համապատասխան:

4. Առանց Հարկադրված Վերաբնակեցման Երաշիքների, ՎՇ կամ ՎԾ կիրառման սահմանափակման, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ենթածրագրի հետ կապված և ոչ մի ֆիզիկական կամ տնտեսական տարհանում չիրականացվի մինչև

(a) ՎԾ համապատասխան փոխհատուցումներ և օրենքով սահմանված այլ վճարների չկատարվեն ներգործության տակ ընկած անձանց, և
(b) ՎԾ համաձայն սկսվի համապարփակ եկամուտների և կենսապայմանների վերականգնման ծրագիրը։

<u>Երաշխիքների Պահանջներն իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցները։</u>

5. Վարկառուն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցներ կտրամադրի ԲԿԾ, ՎԾ և IPP իրականացման համար

<u>Առողջապահության և Աշխատանքի Չափանիշներ</u>

6. Վարկառուն պետք է նպաստի, որպեսզի Երևանն ապահովի, որ Ծրագրում /Ենթա-ծրագրում ներգրավված կապալառուները (i) համապատասխանեն կիրառելի աշխատան-քային օրենսդրությանը; (ii) ամեն ջանք գործադրեն կանանց և տեղացիներին, ներառյալ Ծրագրի շրջակա տեղանքում բնակվող սահմանափակ կարողություններով անձանց աշխատանքի վերցնելու համար; (iii) նույն աշխատանքի համար հավասար վարձատրություն տրամադրեն տղամարդկանց և կանանց; (iv) Ծրագրի/Ենթածրագրի շրջանակներում տղամարդ և կին աշխատողներին տրամադրեն առաջնային բուժօգնության, առողջապահության և անձնական հիգիենային պարագաներով; (v) առավելագույնին հասցնեն կանանց վերապատրաստումը և աշխատանքի ընդունումը; (vi) որպես շինհրապարակներում և հարակից համայնքներում առողջապահության և անվտանգության ծրագրի մաս, Ծրագրի/Ենթածրագրի իրականացման ընթացքում շինարարության վրա աշխատողների համար տեղեկատվական և կրթական արշավ իրականացնեն սեռավարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ; և (vii) զերծ մնան երեխաների աշխատանքից։ Ծրագրով ֆինանսավորվող համապատասխան պայմանագրերը պետք է հատուկ դրույթներ բովանդակեն այս միջոցառումների մասին։

<u>Գենդեր և Զարգացում</u>

7. Վարկառուն կապահովի, որպեսզի ԵՔ-ն, պայմանագրի ուժի մեջ մտնելուց 6 ամսվա ընթացքում, ապահովի ԱԶԲ հետ համաձայնեցված համայնքի և գենդերային գործողու-

թյունների ծրագրի ժամանակին իրականացումը Ծրագրի ժամանակահատվածում, և որ այս նպատակի համար համապատասխան միջոցներ տրամադրվեն։

Երաշխիքների հետ կապված դրույթները մրցութային փաստաթղթերում և Աշխատանքների պայմանագրերում

8. Վարկառուն պետք է ապահովի, որ բոլոր մրցութային փաստաթղթերը և Աշխատանքների պայմանագրերը դրույթներ են պարունակում, որոնք կապալառուներից պահանջում են

ա/ Համապատասխանել կապալառուներին ՆԲԳ-ում, ԲԿԾ-ում և ՎԾ-ում ներկայացվող պահանջներին (այն չափով, որոնք շինարարության ընթացքում ազդում են ներգործության տակ ընկնող մարդկանց վրա) և Երաշխիքների Մոնիտորինգի Հաշվետվությամբ նախատեսված ուղղող կամ կանխարգելող գործողություններին,
բ/ Առանջին բյուջե նախատեսեն նման բնապահպանական և սոցիալական միջոցառումների համար,
գ/ Գրավոր կերպով տեղեկացնեն Վարկառուին ցանկացած անակնկալ բնապահպանական, վերաբնակեցման կամ տեղաբնակներին վերաբերվող ռիսկերի կամ ազդեցությունների մասին, որոնք կարող են ծագել շինարարության, իրականացման կամ Ծրագրի գործողության ժամանակ և որը նախատեսված չէ ՆԲԳ-ով, ԲԿԾ-ով և ՎԾ-ով,
դ/ Մինչև նյութերի տեղափոխման ու շինարարության սկիզբը պատշաճ կերպով արձանագրել ճանապարհների, գյուղատնտեսական հողերի և այլ ենթակառուցվածքների վիճակը,
ե/ Շինարարության ավարտից հետո լիովին վերականգնել անցուղիները, տեղական ենթակառուցվածքը և գյուղատնտեսական հողերն առնվազն մինչև դրանց նախաշինարարական վիճակը։

Երաշխիքների մոնիտորինգ և հաշվետվություններ

9. Վարկառուն պետք է ձեռնարկի հետևյալ քայլերը՝

ա/ Երաշխիքների Մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններ ներկայացնի և ներկայացնելուն պես այս տեղեկատվությունը տրամադրի նաև Ծրագրի ներգործության տակ ընկած անձանց,
բ/ եթե շինարարության, իրականացման կամ Ծրագրի գործողության ընթացքում որևիցե չնախատեսված սոցիալական և/կամ բնապահպանական ռիսկ և/կամ ազդեցություններ ծագեն, որոնք նախատեսված չէին ՆԲԳ-ով, ԲԿԾ-ով կամ ՎԾ-ով, պատշաճ կերպով

իրազեկել ԱԶԲ-ին նման ռիսկերի կամ ազդեցությունների ի հայտ գալու մասին՝ իրադարձության մանրամասն նկարագրությամբ և վերականգնման առաջարկվող ծրագրով։
գ/ ոչ ուշ քան [6 ամիս], ԱԶԲ համար ընդունելի տեխնիկական առաջադրանքով և ընտրության գործընթացի միջոցով ներգրավել որակյալ և փորձառու փորձագետներին կամ համապատասխան ՀԿ-ներին՝ Ծրագրի մոնիտորինգի միջոցով ստացված տեղեկատ-վության հաստատման և նման արտաքին փորձագետների հաստատման գործողությունների խրախուսման նպատակով,
դ/ իրազեկվելուց հետո, զեկուցել ԲԿԾ կամ ՎԾ միջոցառումների կամ պահանջների առկա կամ պոտենցիալ խախտման մասին,

Արգելված ներդրումների ցուցակ

10. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Վարկի և ոչ մի միջոց չօգտագործվի Երաշխիքների Քաղաքականության Կարգի Հավելված 5-ում թվարկված միջոցառումների ֆինանսավորման համար։

Համաֆինանսավորում

11. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի հաջող իրականացման համար պարտաճանաչ կերպով համաֆինանսավորում տրամադրվի։

12. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Երևանն ԱԶԲ համար ընդունելի կերպով համալրված լինի մարդկանցով և սարքավորումներով։

Կառավարում և Կոռուպցիա

13. Վարկառուն կապահովի, որպեսզի Երևանը, միջազգային ստանդարտներին համաձայն, ԱԶԲ համար ընդունելի աուդիտորի միջոցով, ամեն տարի աուդիտի ենթարկի Ծրագրի հետ կապված հաշիվները։

14. Վարկառուն պետք է համապատասխանի ԱԶԲ Հակակոռուպցիոն Քաղաքականությանը (1998թ., մինչ այժմ թարմացված տարբերակին)։ Վարկառուն, հավատարիմ իր՝ լավ կառավարման, հաշվետվողականության և թափանցիկության պարտավորություններին, համաձայնում է, (ա) որ ԱԶԲ իրեն իրավունք է վերապահում, ուղղակիորեն կամ գործա-կալների միջոցով, հետաքննել Ծրագրի հետ կապված ցանկացած կասկածելի կոռուպցիոն, խարդախ, հանցավոր համաձայնության կամ պարտադրանքի դեպքերը; և (բ) համաձայնում է լիովին համագործակցել նման հետաքննության հետ և տրամադրել ողջ անհրաժեշտ

օժանդակությունը։ Վարկառուն պետք է երաշխավորի, որ Ծրագրով ԱԶԲ կողմից բոլոր ֆինանսավորվող պայմանագրերը ներառեն ԱԶԲ՝ ԵՔ և Ծրագրի/Ենթածրագրերի հետ կապված բոլոր կապալառուների, մատակարարների, խորհրդատուների և այլ ծառայություն մատուցողների փաստաթղթերը և հաշիվները քննելու և աուդիտի ենթարկելու իրավունքը։

Գործառնական դրույթներ

15. Վարկառուն պետք է երաշխավորի, որպեսզի ԵՔ-ը ապահովի, որ (i) Ենթածրագրերը իրականացվեն՝ նախագծի հատկորոշումների և շինարարական նորմերի համապատասխան; և (ii) շինարարության վերահսկողությունը, որակի ստուգումը և պայմանագրերի կառավարումը կատարվեն միջազգային ստանդարտների համապատասխան։

16. Վարկառուն պետք է երաշխավորի, որ քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքի աշխատանքի և պահպանման իրական տարեկան ծախսերը 2010–2015թթ. ընթացքում կաճեն առնվազն 5%-ով։

17. Վարկառուն կապահովի, որպեսզի բոլոր համապատասխան քաղաքապետարանները կամ իշխանության մարմինները տեղադրեն անվտանգության համապատասխան նշաններն ու միջոցները։

18. Վարկառուն և Երևանը կապահովեն, որպեսզի ԱԶԲ համաձայնությունը ձեռք բերվի հետևյալ գործողությունների իրականացումից առնվազն 6 ամիս առաջ. (i) Ծրագրով ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, շինության կամ կառույցի սեփականության փոփոխություն; (ii) Ծրագրով ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, շինության կամ կառույցի վաճառքի, փոխանցման կամ վերահսկողության կամ շահի վերաձևակերպում; (iii) Ծրագրով ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, շինության կամ կառույցի վարձակալություն կամ այլ պայմանագիր կամ էլ վերջիններիս նկատմամբ ԵՔ գործառույթների կամ լիազորության փոփոխություն։ Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի ցանկացած նման փոփոխություն տեղի ունենա իրավական և թափանցիկ կերպով։

[ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ]

ՎԱՐԿ ԹԻՎ _____- ARM (SF)

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Քաղաքային կայուն զարգացման ներդրումային Ծրագիր 1)

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

և

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔՊԵՏԱՐԱՆԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ _____

PAL: ARM____

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ամսաթիվ_____-ին Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և Երևանի Քաղաքապետարանի (ԵՔ) միջև կնքած Ծրագրի Համաձայնագիր,
ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

(Ա) Հայաստանի Հանրապետության («Վարկառու») և Ասիական Զարգացման Բանկի միջև [ամսաթիվ] կնքված Վարկային Համաձայնագրով («Վարկային Համաձայնագիր»), ԱԶԲ-ը համաձայնվել է Վարկառուին, ստորև ներկայացված պայմաններով, 30,989,000 Փոխառության Հատուկ Իրավունքի վարկ տրամադրել (SDR) («Վարկ»),

(Բ) ԵՔ-ն, ի նկատի ունենալով ԱԶԲ՝ Վարկառուի հետ Վարկային Համաձայնագիր կնքելու հանգամանքը, իր համաձայնությունն է տալիս հանձն առնելու ստորև սահմանված պարտավորությունները;

Այսպիսով, կողմերը համաձայնում են հետևյալի շուրջ։

ՀՈԴՎԱԾ I

Սահմանումներ

1.01. Եթե այլ բան չի նախատեսվում բովանդակությամբ, ապա Ծրագրի Համաձայնագրում կիրառվող՝ Վարկային Համաձայնագրով և Վարկային Կարգով (ինչպես որ նախատեսված է Վարկային Համաձայնագրում) սահմանված մի շարք եզրեր, ունեն համապատասխանորեն սահմանված իմաստը։

ՀՈԴՎԱԾ II

Հատուկ դրույթներ

2.01. (ա) ԵՔ-ը պետք է հավուր պատշաճի և արդյունավետ իրականացնի ծրագիրը՝ վարչարարական, ֆինանսական, ճարտարագիտական, բնապահպանական և սոցիալական լավագույն փորձին համապատասխան։

(բ) Ծրագիրն իրականացնելիս՝ ԵՔ-ը, իր համար կիրառելի չափով, պետք է կատարի Վարկային Համաձայնագրով ամրագրված պարտավորությունները։

2.02. ԵՔ-ը պետք է, ըստ անհրաժեշտության, պատշաճ կերպով, մատչելի դարձնի դրամական միջոցներ, գործիքներ, ծառայություններ, սարքավորումներ, հող և այլ միջոցներ, որոնք, ի լրումն Վարկային միջոցների, կպահանջվեն Ծրագրի իրականացման համար։

2.03. (ա) Ծրագիրն իրականացնելիս՝ ԵՔ-ը աշխատանքի կընդունի ԱԶԲ համար ընդունելի բանիմաց և որակյալ խորհրդատուների ու կապալառուների՝ ԱԶԲ համար բավարար հանդիսացող ժամկետով և պայմաններով։

(բ) Վարկի միջոցներից Ապրանքների, Աշխատանքների կամ Խորհրդատվական Ծառայությունների գնումները պետք է կատարվեն Վարկային Համաձայնագրի Աղյուսակ 4-ի դրույթներին համապատասխան, բացառությամբ ԱԶԲ հետ համաձայնեցված դեպքերի։ ԱԶԲ կարող է հրաժարվել ֆինանսավորել այն պայմանագրերը, ուր Ապրանքները, Աշխատանքները կամ Խորհրդատվական Ծառայությունները ձեռք չեն բերվել Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնեցված ընթացակարգերի զգալի մասին համապաստախան, կամ երբ պայմանագրի ժամկետներն ու պայմանները բավարար չեն ԱԶԲ համար։

2.04. ԵՔ-ը պետք է իրականացնի Ծրագիրը՝ ԱԶԲ համար ընդունելի ծրագրերի, նախագծման ստանդարտների, հատկորոշումների, աշխատանքների ժամանակացույցների և շինարարական մեթոդների համաձայն։ ԵՔ-ը, մշակելուց անմիջապես հետո, պետք է տրամադրի կամ ապահովի որպեսզի ԱԶԲ տրամադրվեն նման ծրագրերը, նախագծման ստանդարտները, հատկորոշումներն ու աշխատանքների ժամանակացույցը, ինչպես նաև հետագայում այնտեղ տեղ գտած ցանկացած նշանակալից փոփոխությունները, մանրամասնության այն չափով, որը հիմնավորված կերպով կպահանջի ԱԶԲ-ը։

2.05. (ա) ԵՔ-ը, Ծրագրի կամ Ենթածրագրի նյութական բաղադրիչների առաքումն ու տեղադրումն ընդունված փորձին համապատասխան չափով, ռիսկերի նկատմամբ և գումարներով ապահովագրելու նպատակով, պետք է պատասխանատու ապահովագրողի ընտրություն կատարի կամ էլ ԱԶԲ համար ընդունելի այլ միջոցառումներ իրականացնի։

(բ) Առանց վերոնշյալի ընդհանրականության սահմանափակման, ԵՔ-ը հանձն է առնում ապահովագրել Ծրագրի համար և Վարկի միջոցներից ֆինանսավորվող Ապրանքների ձեռք բերման, տեղափոխման կամ տեղադրման կամ օգտագործման վայր առաքման հետ կապված վտանգներից, կամ էլ ապահովել դրանց ապահովագրումը։ Նման ապահովագրման ցանկացած փոխահատուցում պետք է վճարվի այնպիսի

տարադրամով, որն ազատորեն կկիրառվի նման Ապրանքները վերանորոգելու կամ փոխելու համար։

2.06. ԵՔ-ը պետք է վարի կամ ապահովի որպեսզի վարվեն Վարկի միջոցներից ֆինանսավորվող Ապրանքների, Աշխատանքների, Խորհրդատվական Ծառայությունների և ծախսային այլ հոդվածներն արտացոլող գրառումներն ու հաշիվները՝ Ծրագրում դրանց կիրառումը ցույց տալու, Ծրագրի առաջընթացն արձանագրելու (ներառյալ վերջինիս ծախսերը) և շարունակաբար պահպանվող ընդունված հաշվապահական սկզբունքներին համաձայն՝ դրա գործառնությունների և ֆինանսական վիճակի արտացոլման նպատակով։

2.07. (ա) Վարկի նպատակների իրագործման համար՝ ԱԶԲ-ը և ԵՔ-ը պետք է լիարժեքորեն համագործակցեն։

(բ) ԵՔ-ը պետք է պարտաճանաչ կերպով իրազեկի ԱԶԲ Ծրագրի առաջընթացի, Ծրագրի Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարողականի կամ Վարկի նպատակների իրականացմանը միջամտող կամ միջամտության վտանգ պարունակող ցանկացած հանգամանքների մասին։

(գ) ԱԶԲ-ը և ԵՔ-ը ժամանակ առ ժամանակ, կողմերից որևիցե մեկի խընդրանքով, իրենց ներկայացուցիչների միջոցով, Ծրագրի, ԵՔ-ի և Վարկի հետ կապված ցանկացած խնդրի շուրջ կարծիքների փոխանակում կիրականացնեն։

2.08. (ա) ԵՔ-ը պետք է ԱԶԲ տրամադրի վերջինիս կողմից հիմնավորված կերպով պահանջվող բոլոր հաշվետվություններն ու տեղեկատվությունը, որը կապված է (i) Վարկի և դրա միջոցների ծախսի; (ii) այս միջոցներից ֆինանսավորվող Ապրանքների, Աշխատանքների, Խորհրդատվական Ծառայությունների և ծախսային այլ հոդվածների; (iii) Ծրագրի; (iv) ԵՔ վարչարարական, գործառնական և ֆինանսական դրության; և (v) Վարկի նպատակների հետ կապված ցանկացած այլ խնդիրների հետ։

(բ) Առանց վերոնշյալի ընդհանրականությունը սահմանափակելու՝ ԵՔ-ը ԱԶԲ կտրամադրի Ծրագրի իրականացման եռամսյակային և Ենթածրագրերի գործառնության ու կառավարման վերաբերյալ հաշվետվություններ։ Այս հաշվետվությունները կներկայացվեն ԱԶԲ կողմից հիմնավորված կերպով պահանջվող ձևով, մանրամասնությամբ և ժամանակահատվածում, ու ի թիվս այլ խնդիրների՝ կարտացոլեն հաշվետու եռամսյակում արձանագրած առաջընթացն ու խնդիրները, վերջիններիս վերացման ուղղված կամ առաջարկված քայլերը, ինչպես նաև հաջորդ եռամսյակի համար առաջարկվող գործողություններն ու ակնկալվող արդյունքները։

(գ) Ծրագրի ֆիզիկական ավարտից անմիջապես հետո, սակայն, ամեն դեպքում ոչ, ուշ քան 3 ամսվա ընթացքում կամ էլ ԱԶԲ հետ համաձայնեցրած ավելի ուշ ժամկետում, ԵՔ-ը, ԱԶԲ կողմից հիմնավորված կերպով պահանջվող ձևով ու մանրամասներով,

կնախապատրաստի ու ԱԶԲ կներկայացնի Ծրագրի կատարման և նախնական գործառ-նության վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ դրա ծախսերը, ԵՔ՝ Ծրագրի Համաձայ-նագրով ստանձնած պարտավորությունների կատարողականը և Վարկի նպատակների իրականացումը։

2.09. ԵՔ պետք է (i) առանձին հաշիվներ ունենա Ծրագրի, յուրաքանչյուր Ենթածրագրի և իր ողջ գործառնությունների համար ; (ii) շարունակաբար կիրառվող համապատասխան աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձն ու տեխնիկական առաջադրանքը ընդունելի են ԱԶԲ համար, ամենամյա աուդիտի ենթարկի այս հաշիվները և դրանց հետ կապված ֆինանսական հաշվետվությունները (բալանսի, եկամուտների և ծախսերի ու այլ համապատասխան հաշվետվություններ); և (iii) նախապատրաստումից անմիջապես հետո, սակայն, ամեն դեպքում, ոչ ուշ քան համապատասխան հաշվետու տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում, ԱԶԲ տրամադրի աուդիտի ենթարկված հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների հաստատված պատճենները, ինչպես նաև դրանց վերաբերվող աուդիտորի հաշվետվությունը (ներառյալ Վարկի միջոցների կիրառման վերաբերյալ աուդիտորի կարծիքը). բոլորը՝ անգլերեն լեզվով։ ԵՔ-ը պետք է ԱԶԲ տրամադրի նաև այս հաշիվներին և ֆինանսական հաշվետվությունների ու դրանց աուդիտի վերաբերյալ հետագա տեղեկատվությունը, որը ԱԶԲ կարող է ժամանակ առ ժամանակ հիմնավորված կերպով խնդրել։

2.10. ԵՔ պետք է ԱԶԲ ներկայացուցիչներին թույլատրի քննել Ծրագիրը/Ենթածրագիրը, Վարկի միջոցներից ֆինանսավորվող Ապրանքներն ու Աշխատանքները, ինչպես նաև այլ համապատասխան գրառումներն ու փաստաթղթերը։

2.11. (ա) ԵՔ-ը, ըստ պահանջի, պարտաճանաչ կերպով, պետք է իր լիազորությունների շրջանակում ձեռնարկի բոլոր քայլերը իր՝ ստեղծված համակարգի պահպանման, գործառնությունների իրականացման և Ծրագրի կամ իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ բոլոր իրավունքների, սեփականությունների, լիազորությունների, արտոնությունների պահպանման և թարմացման ուղղությամբ։

(բ) Բոլոր դեպքերում՝ ԵՔ-ը իր գործունեությունը պետք է իրականացնի ընդունված վարչարարական, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական փորձին համապատասխան՝ բանիմաց և փորձառու ղեկավարների ու աշխատակազմի վերահսկողության ներքո։

(գ) Բոլոր դեպքերում ԵՔ-ը պետք է, ընդունված վարչարարական, ֆինանսական, ճարտարագիտական, բնապահպանական, սոցիալական, ինչպես նաև պահպանման ու գործարկման փորձին համապատասխան, գործարկի և պահպանի իր ձեռնարկությունները, սարքավորումներն ու այլ գույքը և ժամանակ առ ժամանակ,

անհրաժեշտության դեպքում՝ պարտաճանաչ կերպով, կատարի դրանց վերանորոգումն ու նորացումը։

2.12. Բացառությամբ ԱԶԲ հետ համաձայնեցված դեպքերի, ԵՔ-ը չպետք է վաճառի, վարձակալության հանձնի կամ այլ կերպ տեղաբախշի որևէ ակտիվ, որն անհրաժեշտ է իր գործողությունների արդյունավետ իրականացման համար կամ որոնց բաշխումը կարող է սահմանափակել այս Ծրագրի՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների բավարար կատարողականը։

2.13 Բացառությամբ ԱԶԲ հետ համաձայնեցված դեպքերի, ԵՔ-ը Վարկի միջոցները պետք է կիրառի Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար՝ Վարկային Համաձայնագրի և այս Ծրագրի Համաձայնագրի ընթացակարգերի համաձայն և պետք է ապահովի, որպեսզի բոլոր այս միջոցներով գնված Ապրանքները, Աշխատանքները և Խորհրդատվական Ծառայությունները օգտագործվեն բացառապես Ծրագրի իրականացման համար։

2.14 ԵՔ-ն պետք է պատշաճ կերպով իրազեկի ԱԶԲ իր գործառույթների և իշխանության փոփոխման, կասեցման, կամ չեղյալ հայտարարելու ցանկացած առաջարկության մասին, եթե այն ազդելու է Ծրագրի վրա ու այդ մասով գործողություններ ձեռնարկելու առաջ՝ համապատասխան հնարավորություն ընձեռի ԱԶԲ-ին դիտողությունների ու առաջարկություններ ներկայացնել։

2.15 Երևանը պետք է ապահովի, որպեսզի ճանապարհների և քաղաքային տրանսպորտի պահպանման ծախսերի բյուջեն 2011-2015թթ. ընթացքում աճի տարեկան առնվազն 5%-ով։

ՀՈԴՎԱԾ III

Գործողության Ժամկետ; Դադարեցում

3.01. Ծրագրի այս Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Վարկային Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից։ ԱԶԲ-ը պատշաճ կերպով տեղյակ կպահի ԵՔ այդ ժամկետի մասին ։

3.02. (ա) Այս Ծրագրի Համաձայնագիրը և դրանով նախատեսված կողմերի պարտավորությունները անմիջապես դադարում են հետևյալ երկու ժամկետներին.

(i) այն ժամկետին, երբ Վարկային Համաձայնագիրը իր պայմաններին համաձայն կդադարի; կամ

(ii) Այս Ծրագրի Համաձայնագրից 10-ամյա ժամկետին։

(բ) Եթե Վարկային Համաձայնագիրը, իր պայմանների համաձայն, դադարում է այս բաժնի կետ (ա) (ii)-ում նշված ժամկետից շուտ, ԱԶԲ-ը հավուր պատշաճի տեղեկացնում է ԵՔ-ին այդ իրադարձության մասին։

3.03. Անկախ Վարկային Համաձայնությամբ որևիցե չեղարկումից կամ կասեցումից՝ այս Ծրագրի Համաձայնության բոլոր դրույթները շարունակում են լիաուժ մնալ։

ՀՈԴՎԱԾ IV

Այլ Դրույթներ

4.01. Այս Ծրագրի Համաձայնագրով պահանջվող կամ թույլատրվող ցանկացած տեղեկանք կամ հարցում և այս Ծրագրի Համաձայնագրի կողմերի միջև ցանկացած պայմանավորվածություն պետք է ձևակերպվի գրավոր։ Նման տեղեկանքը կամ հարցումը մյուս կողմին հավուր պատշաճի տրված կամ կատարված կհամարվի, եթե այն առձեռն, փոստով, հեռագրով, մալուխով, տելեքսով, ֆաքսային կամ ռադիոհաղորդագրությամբ՝ ուղարկվի ստորև բերված հասցեին կամ այլ հասցեին, որոնք ուղարկող կողմին կմատնանշի մյուս կողմը։ Հասցեները հետևյալն են՝

<u>ԱԶԲ</u>

Asian Development Bank
P.O. Box 789
0980 Manila, Philippines
Ֆաքսի համար։

(632) 636-2444
(632) 636-2301.

<u>ԵՔ</u>

[_____]
Երևան, ՀՀ

Ֆաքսի համար։
_____.

4.02. (ա) ԵՔ կողմից կամ նրա անունից ցանկացած պահանջվող կամ թույլատրվող գործողություն և ցանկացած պահանջվող կամ թույլատրվող փաստաթուղթ պետք է կատարվի/տրվի Երևանի Քաղաքապետի կամ այլ անձի/անձանց, որոնց կլիազորի Երևանի Քաղաքապետը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով ԱԶԲ-ին։

(բ) ԵՔ-ը պետք է ԱԶԲ տրամադրի այս բաժնի (ա) կետի համաձայն գործող յուրաքանչյուր անձի լիազորությունները հաստատող բավարար ապացույցներ՝ յուրաքանյուր անձի ստորագրությամբ հաստատված նմուշ-օրինակի հետ միասին։

4.03. Ծրագրի այս Համաձայնագրի կողմերից ցանկացածի համար չկատարումից ծագող իրավունքի, լիազորության կամ փոխհատուցման միջոցներին ուշացումը կամ չիրականացում չի մեղմացնում նման իրավունքը, լիազորությունը կամ փոխհատուցման միջոցը և չի մեկնաբանվում որպես զիջում նման չկատարման համար, ոչ էլ ցանկացած չկատարման առումով տվյալ կողմի գործողությունը կամ այդ չկատարման մասով զիջումը կազդի կամ կմեղմացնի հաջորդող չկատարումների մասով տվյալ կողմի իրավունքի, լիազորության կամ փոխհատուցման միջոցների վրա։

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԱՎԱՍՏՄԱՄԲ՝ կողմերը՝ գործելով իրենց՝ պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով, վերը նշյալ ամսաթվով, ստորագրում են այս Ծրագրի Համաձայնագիրը և ապահովում են, որպեսզի այն առաքվի ԱԶԲ գլխամաս։

Ասիական Զարգացման Բանկի կողմից

_____

[Անուն, Պաշտոն]

Երևանի Քաղաքապետարանի կողմից

_____

[Անուն Պաշտոն]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ